Կարգավորման կառավարում

- ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատված բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների «Կարգավորման ազդեցության գնահատում» վերապատրաստման ծրագրով «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հետ համատեղ 2013 թ.-ից իրականացվում է քաղաքացիական ծառայողների վերապատրաստում, որի շրջանակներում արդեն իսկ վերապատրաստվել են շուրջ 200 քաղաքացիական ծառայողներ:
- Միայն 2014թ. ընթացքում կարգավորման ազդեցության գնահատման են ենթարկվել շուրջ *380 իրավական ակտեր, որոնցից մոտ 9.74 %-ին (մոտ 37 իրավական ակտ) տրվել է տնտեսական, այդ թվում փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում դրական ազդեցությամբ, իսկ շուրջ 7.89%-ին (մոտ 30 իրավական ակտ) բացասական ազդեցությամբ եզրակացություն:* Վերջիններս նախագծողների կողմից լրամշակվելուց հետո միայն ներկայացվել են ՀՀ կառավարության քննարկմանը:



- 2015 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում կարգավորման ազդեցության գնահատման են ենթարկվել շուրջ 82 *իրավական ակտեր, որոնցից մոտ 30.4 %-ին (մոտ 25 իրավական ակտ) տրվել է տնտեսական, այդ թվում փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում դրական ազդեցությամբ, իսկ շուրջ 6.1%-ին (մոտ 5 իրավական ակտ)՝ բացասական ազդեցությամբ եզրակացություն:*



Կարգավորման կառավարում

2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կարգավորման ազդեցության գնահատման են ենթարկվել 180 *իրավական ակտեր, որոնցից 22.22.%-ին (40 իրավական ակտ) տրվել է տնտեսական, այդ թվում փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում դրական ազդեցությամբ, իսկ 12.22 %-ին (22 իրավական ակտ)՝ բացասական ազդեցությամբ եզրակացություն:*



*Ըստ այդմ, 2-րդ եռամսյակի ընթացքում, համեմատած առաջին եռամսյակի հետ, արձանագրվել է տնտեսական, այդ թվում փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման ենթարկված իրավական ակտերի նախագծերի ընդհանուր քանակի աճ՝ կազմելով 98 իրավական ակտ՝ նախորդ եռամսյակի նույն ժամանակահատվածի հետ համեմատած ազդեցության գնահատման ենթարկված 82 իրավական ակտերի փոխարեն (**հանրագումարը կիսամյակի արդյունքներով կարգավորման ազդեցության գնահատման ենթարկված** 180 **իրավական ակտերի նախագծեր**):*

Միաժամանակ, նախորդ եռամսյակի հետ համեմատած, գրեթե 3 անգամ ավելացել է ***տնտեսական, այդ թվում փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում*** տրամադրված բացասական ազդեցությամբ եզրակացությունների քանակը՝ կազմելով 2-րդ եռամսյակի ընթացքում 17՝ նախորդ եռամսյակում տրամադրված 5 բացասական ազդեցությամբ եզրակացությունների փոխարեն (**հանրագումարը կիսամյակի արդյունքներով՝** 22 **բացասական ազդեցությամբ եզրակացություններ**), իսկ դրական ազդեցությամբ եզրակացությունների քանակը կրճատվել է շուրջ 2 անգամ՝ կազմելով 15՝ նախորդ եռամսյակում տրամադրված 25 դրական ազդեցությամբ եզրակացությունների փոխարեն (**հանրագումարը կիսամյակի արդյունքներով՝** 40 **դրական ազդեցությամբ եզրակացություններ**):

2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում տրամադրված բացասական ազդեցությամբ եզրակացությունները՝ ըստ ոլորտների և քանակի